բի դալարոց և առ ջուրս հանդստեան» ըստ Սաղմոսերգու մարգարէին։

Քաջասէր աշխատելով կատարել նոյն Առաքելոյ՝ առաջնորդաց վերաբերեալ պատուէրը՝ կառավարել եմ ինձ յանձնած ժողովուրդը «ոչ զօշարարութեամբ, այլ յօժարութեամբ. ոչ իբրև տիրելով վիճակին՝ այլ լինել օրինակ հօտին», ինչպէս կարեն վկայել շամախեցիք և բաղուեցիք, որոց մէջ էի բնակւում մեծ մասամբ։

Բ. Զինել, պատրաստել տալով՝ օծել եմ յետագայ գիւղօրէից եկեղեցիքը – նիւթական տաճարները, որք են —

1. Սուրբ Ստեփաննոսի վանքը Սաղիանի՝ յերես 22—23, 2. Քեալբանդ, 3. Բիլիստան, 4. Աղբուլաղ, 5. Արփաւուտ, 6. Հնդաբ, 7. Քեօվլուջ գիւղօրէից եկեղեցիքն։ Եւ օծել եմ հիմունքն Բաղուի գերեզմանատան սուրբ Յարութեան մատրան և Բզովանդ գիւղի եկեղեցւոյ՝ Դեօքչայի գաւառի՝ Վանքաշէնի գործակալութեան մէջ։

Գ. Զինել պատրաստել տալով՝ բացել եմ հետեւեալ եկեղեցական դպրոցներն, որք են —

1. Սաղիանի վանքի վանական դպրոցն՝ յերես 82 - 112, 2. Գանձակ գիւղի, 3. Գիրք գիւղի, 4. Ղալակայ, 5. Քիլվար, 6. Մէյսարի և 7. Աւանաշէն գիւղերի դպրոցներն, այլ և 8. Շամախի քաղաքի տղայոց դպրոցն՝ վիճակային տաճարի վերնայարկում և 9. Անդրկասպեան աշխարհի Ասղապատ քաղաքի դպրոցն։

Դ. 1893 թուէն պատրաստելով Բաղուի թեմի թեմական դպրանոցի հաստատութեան գրագրութիւնն - կանոն, ծրագիր, նախահաշիւ դրամական մտից և ծախուց, և Բաղուի հայ ժողովրդեան պատրաստականութեան խնդրագիրն են, յայտարարութեանս հետ (1893 թուին, յերես 115) ուղարկել եմ Ս Մրկրբտիչ Վեհ. Կաթուղիկոսին, որ օրինական կարգաւ թոյլատրէր Շամախու (անուամբ միայն) թեմական դպրանոցն փոխադրել ի Բաղու, ուր ամենայն ինչ պատրաստ է —հոյակապ մեծաշէն տունն 125,000 մանէթով շինուած, ծախուց դրամն 15,000 մանէթ, գործող անձինքն են, են։

Ե. Հոգեւոր ծայրագոյն իշխանութեանս հրամանաւ —Սի-